

կան տանեն¹, եւ երկրորդին Տէր՝ ի Խորձենոյ, եւ չորրորդին Մուշէ՝ ի Տարաւնոյ: 19 Որոց աւգնելով զաւրեր երանելին Մաշտոց, հանդիպեցուցանէր զհայերէն աթուրթայսն² ըստ կարգման սիւլվբայիցն³ Յունաց, ստեպ հարցմամբ եւ ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակայ⁴ զաթուրթայիցն գաղափար, ըստ անսայթաթութեան յունին: 20 Վասն զի ոչ լինէին բաւական ի վճարել անսխալ ուղղակի, առանց առաջնորդելոյ նոցա սրբոյ հայրապետին Սահակայ, որ յոյժ առլցեալ անցուցանէր վարժիւք զբազում գիտնովքն Յունաց, եղեալ կատարելապէս հմուտ⁵ երգողական տառիցն եւ հռետորական յորդասաց յայտնաբանութեան, եւս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանիւր:

21 Կարգեալ այնուհետեւ, Փրկչին առաջնորդութեամբ, զգիր գրենոյն հայերէնի եւ հելլենացին⁶ ուղղեալ յաւրինուածս՝ ցանկային կարգել դպրոցս եւ ուսուցանել բազմութիւն մանկտոյ. քանզի ամենայն անձն յորդորեալ փափագէր⁷ յուսումն հայերէն գիտութեան⁸, որպէս ի խաւարէն, յասորի տանջանացն, զերծեալք ի լոյս՝ խնդային: 22 Բայց տարակուսեալք կասէին յանգիւրթենէ Գրոց սրբոց. քանզի ոչ գոյին դեռ եւս հայերէն լսողութեամբ սուրբ կտակարանք եկեղեցւոյ: 23 Եւ երանելին Մաշտոց եւ որ ընդ նմա պատուական քահանայքն էին⁹ ոչ զաւրէին համարձակել յայսպիսի սաստիկ եւ կարեւոր գործ, թարգմանել¹⁰ գիրս ի յոյն լեզուոյն ի հայ բարբառս. վասն զի ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգի յունարէն ուսմանն:

ԺԱ. Ապա ժողովեալ ամենայն աւագ քահանայք աշխարհին Յայոց հանդերձ երանելեան Մաշտոցիւ¹¹ եւ ամենայն նախարարաւք աշխարհիս Յայոց եւ մեծամեծ տանուտերաւք առ թագաւորն Յայոց Վռամշապուհ, եւ հանդերձ թագաւորան սկսան աղաչել զսուրբ կաթողիկոսն Սահակ, արկանել զանձն յաշխատութիւն հոգեւոր եւ թարգմանել զաստուածաշունչ կտակարանս ի յոյն լեզուոյն ի հայ բարբառս: 2 Եւ դասք աւագ քահանայիցն ասէին ցսուրբ քահանայապետն, թէ «Մեք որ կամքս առաջի քո, հանդերձ երանե-

1 Ձ. ի պաղատանէն

2 Ձ. աթուրթայսն

3 ՁԱտ. սալվբայիցն

4 ՏՏ. Իսահակայ. թուի ի Սահակայ

5 Ձ. հմուտք

6 Ձ. հելլենացին

7 ՏՏ. փափաքեր

8 Ձ. գիտութեամբ

9 Ձ. լուսանցբում՝ յոհան, խորձեն, յովսէփ, մուշէ

10 Ձ. այստեղ եւ յետոյ՝ թարգմանել

11 Ձ. այստեղ եւ յետոյ՝ Մաշտոց